

Ելեմա ԵՐՁՆԿՅԱՆ
Նարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՁԵՂԶՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՉ
ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ
ՆԵՐԻՄԱՍՏԻ ԿՐՈՂՆԵՐ**

Միջանձնային լեզվական հաղորդակցումը՝ երկխոսությունը, հանդիսանալով բոլոր տեսակի հարաբերությունների նախապայմաններից մեկը, խոսքային միջոցներով խոսող անձանց մտորումների արտահայտման և տեղեկատվության փոխանակման հիմնական բանաձևն է: Անկախ խոսակցության թեմայից, վայրից և խոսող անձանց ինքնությունից՝ երկխոսությունները լի են գեղյումներով, որոնք կոչված են հնարավորինս հակիրճ, սակայն առավել բովանդակալից խոսքարտաբերման համար: Ձեղչումը նաև միջոց է ավելորդ երկարաբանությունների շրջանցման միջոցով հաղորդակցման գործընթացը արագացնելու և բուն ասելիքի կարևորությունը կորցնելուց խուսափելու համար:

Ինչպես հավաստում է փաստական նյութի քննությունը՝ գեղյումը լեզվօգտագործման ձև է, որը չի հակասում անգլերենի լեզվական կանոններին: Այն ձևային, բառի, բառակապակցության և անգամ նախադասության մի մասի բացակայությունն է արտակա կառույցից, որը սակայն ընկալելի և վերականգնելի է: Լեզվական կառույցներում կրկնվող անդամի գեղյումը թեև աչքի համար տեսանելի չէ, սակայն որոշակի գործառույթ է կատարում: Այսինքն, գեղչված անդամի արտահայտած իմաստը կազմում է ընդհանուր իմաստի բաղկացուցիչ մասը, որը պարզապես տեսանելի չէ արտակա կառույցներում:

Ձեղչումը համարվում է այն լեզվական ձևերից, որոնք ունեն ներիմաստ /Halliday & Hasan, 1976: 142; Wilbers, 2007: 54-55/: Ինչպես հայտնի է, արտակա կառույցում չարտահայտված կամ բացակայող, սակայն ընկալվող իմաստները կոչվում են ներիմաստներ: Հետևաբար, արտակա կառույցներում գեղչված անդամները, որոնք բացակայում են արտակա կառույցից, նմանապես համարվում են ներակալված:

Ձեռչված նախադասություններում թեև խոսքը գիտակցաբար և նպատակային է զեղչվում, դրա հետևանքով նախադասության իմաստը չի փոխվում, քանի որ արտակա կառույցներում արտահայտված իմաստը համընկնում է խոսքն արտաբերողի խոսքային մտադրության հետ: Այսինքն, խոսողը զեղչում է իր խոսքը ոչ թե իմաստն անուղղակիորեն արտահայտելու, այլ, ինչպես արդեն նշվել է, կրկնվելուց խուսափելու համար: Այս հանգամանքը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ *զեղչված խոսքում ներակայված իմաստը ոչ կանխամտածված ներիմաստ է*: Այն միավորները, որոնք ավելորդ անգամ չկրկնվելու համար բացակայում են, պայմանականորեն անվանել ենք *զեղչման ներիմաստակիր միավորներ*:

Հարկ է նշել, որ զեղչման ներիմաստի ընկալումը ներիմաստի վերծանման այն բացառիկ դեպքն է, երբ մեկնաբանությունը կատարվում է ոչ թե հնարավոր ենթադրելի վարկածների առաջարկման միջոցով, այլ ճշգրտորեն վերականգնվում է այն ամբողջական կառույցը, որի շրջանակներում կատարվել է զեղչումը: Այսինքն, այն, ինչ ներակայվում է զեղչված անդամների շնորհիվ, մեկնաբանության այլընտրանքային տարբերակ չունի:

Ձեղչման ներիմաստը և զեղչում չունեցող կառույցում ամփոփված ներիմաստը իրենց բնույթով տարբեր են: Եթե զեղչման ներիմաստը միանշանակ մեկնաբանվում է հարակից բառերից ու կառույցներից զեղչված միավորների վերականգնմամբ, ապա զեղչված խոսքում ներակայվող իմաստի վերարտադրումը պայմանավորված է խոսողի անհատական համատեքստի՝ խոսքային մտադրությունների ընկալմամբ, քանի որ խոսքի իրական իմաստը բխում է խոսողի խոսքային մտադրություններից, թե նա ինչ նկատի ունի խոսքն արտաբերելիս:

Ստորև ներկայացվող օրինակների միջոցով կփորձենք ցույց տալ զեղչման ներիմաստի և զեղչված կառույցի ներիմաստի տարբերություններն ու առանձնահատկությունները:

1. *Ձեղչման ներիմաստ՝*

A. *Anybody want to learn?* (Does anybody want to learn?)

B. *Me.* (I want to learn)

A. All right, you'll learn.

B. *Here in school?* (Will/should/must I learn here in school?)

A. **Certainly.** (*You will/should/must certainly learn here in school*)
(Specht, 87)

2. Չգեղչված կառույցի ներիմաստ`

A. How 'bout a drink?

B. **It is ready.**

A. What else is ready?

B. Who knows? (Clavell, 168)

Առաջին օրինակում լեզվի քերականական կառույցների իմացությունը թույլ է տալիս հեշտությամբ վերականգնել նախադասության մեջ գեղչված լինելու պատճառով բացակայող անդամները: Որոշ դեպքերում վերակառուցումը բառացիորեն այլընտրանք չունի, ինչպես Does anybody want to learn? և I want to learn կառույցներում, երբեմն էլ կառույցը, թեև իմաստային առումով նույնությամբ վերականգնվում է, սակայն որոշ լեզվական միավորներ ճշգրտությամբ վերարտադրել հնարավոր չէ, ինչպես Will/should/must I learn here in school? և You will/should/must certainly learn here in school նախադասություններում: Եթե երկրորդ երկխոսությունը դիտարկենք տեքստի ամբողջական համատեքստից դուրս` որպես առանձին երկխոսական հատված, որի արտաբերման նպատակներին ծանոթ են միայն խոսողն ու խոսակիցը, It (the drink) is ready նախադասության ներիմաստը կարելի է բազմակի մեկնաբանել` Drink is ready for drinking, Drink is ready to be delivered, Drink is ready to entertain the guests, Drink is ready to be served և այլն:

Կարևոր է նաև նկատել, որ որոշ ընդհանրությունների պատճառով գեղչումն ու ներիմաստն առաջին հայացքից կարծես նույնականացվում են` համարվելով միևնույն լեզվական երևույթ: Թեև գեղչումը լեզվագիտագործման այնպիսի ձև է, որի յուրաքանչյուր դրսևորում ենթադրում է ներիմաստի առկայություն, այնուամենայնիվ, լեզվաբանության մեջ գեղչումն ու ներիմաստը տարբեր հասկացություններ են: Ջեղչման և ներիմաստի վերաբերյալ լեզվական նյութը հնարավորություն է տալիս դիտարկել գեղչման և ներիմաստի ընդհանրություններն ու տարբերությունները: Ինչպես արդեն նշվել է, ընդհանուր առմամբ գեղչումը սահմանվում է որպես նախադասության մեջ բառի կամ բառերի բացթողում, որը կարելի է վերականգնել կամ կռահել նախադասության մյուս անդամներից, քանի որ գեղչված բառերը, բառակապակցություններն ու նախադասություններն ար-

դեն ասվածների ճշգրիտ «արտասպումն են» /Պետրոսյան, 1987; Աբրահամյան, 1992; Kaushanskaya, 1959; Quirk & others, 1978, 1985; Halliday & Hasan 1985; Buzarov, 1988/: Ներիմաստն, ընդհանուր առմամբ, սահմանվում է որպես տողատակային, քաքնված իմաստ, արտակա կառույցներում նշույթավորում չունեցող տեղեկատվություն, որը, սակայն, ընկալվում է անհատական կամ ընդհանուր համատեքստի շրջանակներում /Lyons, 1977; Levinson, 1983; Brown & Yule, 1983; Ostman, 1986/:

Այսպիսով, մեր դիտարկումները թույլ են տալիս ներկայացնել **զեղչման և ներիմաստի հետևյալ ընդհանրությունները՝**

1. Չեղչման և ներիմաստի հաղորդման շնորհիվ արագացվում է հաղորդակցման գործընթացը:

2. Չեղչումն ու ներիմաստի հաղորդումը հնարավորություն են ընձեռում նվազագույն լեզվական միջոցների գործածմամբ (բառային տնտեսման նպատակով) հասնել առավելագույն տեղեկատվության հաղորդման:

3. Ե՛վ զեղչման, և՛ ներիմաստի դեպքում լեզվական միավորների և իմաստային բացթողումները կատարվում են արտակա կառույցներում:

4. Երկու դեպքում էլ արտակա կառույցից բացակայում է բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը, ուստի իմաստը քաքնված է տեսանելի միավորների ներքո:

5. Թե՛ ներիմաստի, թե՛ զեղչման շնորհիվ արտակա կառույցում «երևում են» տվյալ հաղորդակցման միայն առավել կարևոր տեղեկատվական բաղադրիչները, որոնց միջոցով խոսակցի ուշադրությունը կենտրոնանում է միայն խոսքային մտադրության՝ բուն ասելիքի վրա:

Դիտարկենք հետևյալ օրինակը.

A. Fred, will you help me?

B. **How?** (How will I help you?)

A. **Go after cab with me?** (You should go after cab with me)

B. **Now?** (Should I go after cab with you now?)

A. **Right now. Right this minute.** (You should go after cab with me right now. You should go after cab with me right this minute)

B. **How long ago did cab leave?** (How long ago did the cab leave?)

A. **About an hour** (The cab left about an hour ago). (Specht, 266)

Ինչպես տեսնում ենք, օրինակում խոսողն ու խոսակիցը, զեղչելով «ավելորդ» հատվածները, արտաբերում են միայն այն բառերը, որոնք արտահայտում են խոսքի բուն իմաստը: Այսինքն, արտակա կառույցներում տնտեսելով, հետևաբար նաև ներակայելով բառա- յին միավորները՝ երկխոսության մասնակիցները հաղորդակցումը դարձնում են առավել արդյունավետ, իսկ թե ինչ է ներակայված՝ ինքնաստիճանի հասկանալի է լեզվին ծանոթ յուրաքանչյուրին:

Արտակա կառույցներում համապատասխան լեզվական միա- վորների բացակայության և ներակա կառույցներում դրանց իմաստի առկայության վերոնշյալ ընդհանրությունները առաջացնում են զեղչման և ներիմաստի նույնականացում: Սակայն, կարևոր է նկատել, որ այս երևույթները նույնը չեն և ունեն նաև տարբերություններ: Այսպիսով, լեզվաբանության մեջ զեղչմանը բնորոշ չափորոշիչների տարբերակումը /Bittencourt & Ramalho, 2002: 398; Wasinger, 2006: 21/ հիմք հանդիսացավ **զեղչման և ներիմաստի հետևյալ տարբե- րությունները** դիտարկելու համար՝

1. Չեղչումն առնչվում է արտակա կառույցում քերականական ամբողջականության բացակայությանը, իսկ ներիմաստը՝ արտակա կառույցում ամփոփված հավելյալ իմաստի առկայությանը: Այսինքն, եթե զեղչված կառույցները որոշակի քերականական անավարտու- թյուն և չարտահայտված շարահյուսական կառուցվածք ունեն, նե- րակա կառույցները արտահայտում են շարադրված խոսքի բազ- մաբովանդակությունը:

2. Չեղչված բառերը խոսքում ճշգրտորեն վերականգնելի են քերականական համատեքստից, քանի որ դրանք, ինչպես արդեն նշվել է, նախորդող քերականական ձևերի ճշգրիտ «արտատպում- ներն են»: Ներիմաստը նույնությամբ վերականգնել հնարավոր չէ: Այն վերարտադրվում է հնարավոր ենթադրությունների տեսքով՝ սուբյեկտիվորեն առաջնահերթություն տալով հնարավոր տարբե- րակներից որևէ մեկին:

3. Չեղչման դեպքում բաց թողնված բառերը վերականգնվում են «հարևանությամբ» գտնվող նախադասությունների կառույցներից: Ներիմաստի դեպքում արտաքուստ բացակայող իմաստը պետք է փնտրել բառի հավելյալ իմաստների, որոշ քերականական կառույց- ների կամ անհատական համատեքստի շրջանակներում, հետևա-

բար, ներիմաստի մեկնաբանությունը կարող է ամբողջությամբ տարբերվել բառաշարքի արտահայտած իմաստներից:

4. Բացակայող բառերի վերականգնման արդյունքում ունենում ենք քերականորեն «առողջ» նախադասություն, որն իր իմաստով չի տարբերվում բնօրինակից: Ներիմաստի վերականգնման ժամանակ ներիմաստի որոշ տեսակների կան-խենթադրույթների և կանխավարկածների դեպքում հնարավոր է վերարտադրել մոտավոր կամ ճշգրիտ իմաստներ, իսկ ներակայույթների դեպքում՝ ոչ (լեզվաբանության մեջ տարբերակվում են ներիմաստի երեք հիմնական տեսակներ՝ կանխենթադրույթներ, կանխավարկածներ, ներակայույթներ):

Վերոնշյալ տարբերությունները հիմք են հանդիսանում ներիմաստը և գեղչումը ոչ միայն տարբեր լեզվական երևույթներ համարելու, այլ նաև գեղչման ներիմաստը կանխամտածված և ոչ կանխամտածված մակարդակներում դիտարկելու համար: Այս նպատակին հասնելու համար հարկ է անդրադառնալ որոշ լեզվաբանների կողմից գեղչման՝ լեզվական և խոսքային մակարդակներում արտահայտման տարբերակմանը (ellipsis dependent on linguistic context and ellipsis not dependent on linguistic context) /Quirk & others, 1978, 1982, 1985; Buzarov, 1998; Բրուտյան, 2002/:

Լեզվական մակարդակում գեղչումը դրսևորվում է որոշ լեզվական ձևերի քերականական կառույցների շրջանակներում: Խոսքային մակարդակում այն անհատի սուբյեկտիվ լեզվօգտագործմամբ պայմանավորված որոշակի միավորների բացթողումն է: Չեղչման տեսակներից լեզվական մակարդակում արտահայտվում է համակարգային գեղչումը (systemic ellipsis), քանի որ այն համարվում է լեզվական կարծրատիպ, որը կիրառվում է խոսքում անկախ խոսողի հայեցողությունից: Խոսքային մակարդակում արտահայտվում է համատեքստային կամ իրադրային գեղչումը (contextual or situational ellipsis), որը, որպես լեզվում սահմանված կառուցվածքային ձև, գոյություն չունի: Այն խոսողի հայեցողությամբ նախադասության որևէ կոնկրետ անդամի կամ անդամների գեղչումն է /Quirk & others, 1985: 895/:

Մեր կատարած դիտարկումները թույլ են տալիս գալ այն եզրահանգման, որ համատեքստային կամ իրադրային գեղչման ներակա-

յումը երկխոսության մեջ կարող է դրսևորվել հետևյալ հաղորդակ-
ցական ձևերում՝

1. Հարց-պատասխան

A. **You left Paris yesterday**, sir? (Did you leave Paris yesterday, sir?)

B. **Yesterday. And you?** (I left Paris yesterday. And what about your arrival?)

A. I came direct.

B. **From London?** (Did you come direct from London?)

A. **Yes.** (Yes, I came direct from London?) (Dickens, 125)

Հարց-պատասխան կառույցներում յուրաքանչյուր պատաս-
խան իր մեջ ներակայում է հարցի իմաստը: Այս է պատճառը, որ հա-
ղորդակցման ընթացքում պատասխանի արտակա կառույցում հա-
ճախ չի կրկնվում կամ մասամբ է կրկնվում հարցում արտաբերված
բառաշարքը՝ խոսքն ավելորդ կրկնություններով չծանրաբեռնելու
համար:

2. Ասույթ-հարց

A. It's God's country.

B. **What?** (What country is God's country?)

A. **The States.** (The United States of America is God's country)

B. **Why?** (Why is the United States of America God's country?)

A. Only place in the world where you can buy anything, where you
got a chance to make it. (Clavell, 155)

Ոչ միայն տվյալ օրինակում, այլ առհասարակ, գրեթե բոլոր
ասույթ-հարց երկխոսություններում ասույթին հաջորդող յուրաքանչ-
յուր հարց ներակայում է ասույթում առկա որոշ միավորներ, իսկ
հաջորդող ասույթը ընդգրկում է տվյալ հարցում ներակայված կամ
արտահայտված որոշ բառեր և կառույցներ:

3. Ասույթ-ասույթ

A. I think I should prepare him a little.

B. **If you** can I should be grateful. (If you can prepare him a little I
should be grateful)

A. When he returns take care of him.

B. **I shall.** I have a great affection for him. (I shall take care of him
when he returns)

A. *I know*. (I know you will take care of him when he returns)
(West, 264)

Այն երկխոսություններում, որոնք զարգանում են ասույթ-ասույթ հերթակայությամբ, զեղչումը գրեթե նույն սկզբունքով է ներակայվում, ինչ հարց-պատասխան, ասույթ-հարց բանաձևերում: Միակ տարբերությունն այն է, որ հարցական կառույցի բացակայության պատճառով այստեղ չեն կարող զեղչվել այն օժանդակ բայերը, որոնք ի հայտ են գալիս հարցադրման ժամանակ (do, does, did):

Այսպիսով, որպես ներիմաստակիր կառույցներ՝ համակարգային և համատեքստային կամ իրադրային զեղչում պարունակող կառույցները կարող ենք սահմանել հետևյալ կերպ. *Այն զեղչված կառույցները, որտեղ զեղչված անդամի ներակայումը լեզվական համակարգում հաստատված կառուցվածքային ձև է, կարող են համարվել համակարգային զեղչման ներիմաստակիրներ, իսկ այնպիսիք, որտեղ նախադասության որևէ անդամի կամ անդամների զեղչումը խոստովի լեզվական ընտրության արդյունքն է, սակայն քերականական կանոններն այլ բան են նախատեսում, համարվում են իրադրային զեղչման ներիմաստակիրներ:*

Համակարգային և համատեքստային կամ իրադրային զեղչումների վերոնշյալ առանձնահատկությունները թույլ են տալիս գալ այն եզրահանգման, որ զեղչման այս տեսակները, կազմելով մի դեպքում լեզվական կանոնների, մյուս դեպքում՝ հաղորդակցման սկզբունքների բաղադրիչ մասը, կանխամտածված չեն արտահայտվում: Կանխամտածված ներիմաստը միտումնավոր ոչ ուղղակի միջոցներով արտահայտված իմաստն է, որը, բացակայելով արտակա կառույցներում, կանխամտածված ներակայվում է, իսկ կրկնվող և ավելորդ տեղեկատվության զեղչումը սուբյեկտիվ դիտավորություն չի պարունակում: Թեև զեղչման ժամանակ խոսողը կանխամտածված կրճատում է արտաբերված նախադասությունները, դրանից նրանց իմաստը չի փոխվում, իսկ կանխամտածված ներիմաստի դեպքում նույնիսկ առանց զեղչման խոսքի իրական իմաստը տարբեր է նախադասության իմաստից:

Այսպիսով, համակարգային և համատեքստային կամ իրադրային զեղչումների բացակայող միավորները ոչ կանխամտածված կերպով ներակայվում են խոսքում և համարվում ներիմաստի կրողներ: Հետևաբար, որպես ներիմաստակիր լեզվական ձևեր՝ համակարգա-

յին և համատեքստային կամ իրադրային զեղչումները, խոսքի իմաստի վրա որևէ ազդեցություն չունենալու շնորհիվ, կարող են համարվել ոչ կանխատեսած մերիմաստի արտահայտման լեզվական կառույցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bittencourt G., Ramalho G. Advances in artificial intelligence // 16th Brazilian Symposium on artificial intelligence: SBIA, volume 16, 2002.
2. Brown G., Yule G. Discourse analysis. Cambridge: Cambridge University Press, 1983.
3. Buzarov V.V. Essentials of conversational English. Moscow, 1998.
4. Halliday M.A., Hasan R. Cohesion in English. London: Longman, 1976.
5. Halliday M.A., Hasan R. Language, context, and text: aspect of language in a social-semiotic perspective. Oxford: Oxford University Press, 1985.
6. Kaushanskaya V.L. A grammar of the English language. Leningrad, 1959.
7. Levinson S.C. Pragmatics. Cambridge: Cambridge University Press, 1997.
8. Lyons J. Semantics. Volume 2. Cambridge: Cambridge University Press, 1977.
9. Ostman J.O. Pragmatics as implicitness: an analysis of question particles in Solf Swedish, with implications for the study of passive clauses and the language of persuasion. PhD dissertation. University of California. Berkeley, 1986.
10. Quirk R., Greenbaum S., Leech G., Svartvik J. A comprehensive grammar of the English language. London: Longman, 1985.
11. Quirk R., Greenbaum S. A concise grammar of contemporary English. London: Harcourt Brace Jovanovich, 1978.
12. Quirk R., Greenbaum S., Leech G., Svartvik J. A grammar of contemporary English. Longman, 1978.
13. Schwabe K., Winkler S. The interfaces: deriving and interpreting omitted structures. London: John Benjamins Publishing House, 2003.
14. Wasinger R. Multimodal interaction with mobile devices: fusing a broad spectrum of modality combinations. Berlin: Akademische Verlagsgesellschaft Aka GmbH, 2006.

15. Wilbers S. Keys to great writing. USA: Writer's Digest Books, 2007.
16. Արահանյան Ս. Հայոց լեզու, Երևան, 1992:
17. Բրուտյան Լ.Գ. Ներակայման տեսության հիմունքներ, Երևան, 2002:
18. Պետրոսյան Հ.Չ. Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
19. Clavell J. King Rat. USA: Dell Publishing Co., 1962.
20. Dickens Ch. A tale of two cities. New York: New American library, 1960.
21. Phillips C.S. Eyes of the dragon. Highlights for Children, vol. 56, N 8, 2001.
22. Specht R. Tisha. USA: Bantam Books, 1976.
23. West M.L. The shoes of the fisherman. USA: Dell Publishing Co., 1963.

Ե. ԵՐԶԻՆԿՅԱՆ, Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ – *Проявление непреднамеренной имплицитности в эллиптических предложениях в диалоге.* – Целью данной статьи является исследование эллиптических конструкций в английском диалоге с точки зрения непреднамеренности их выражения. Упомянутые грамматические конструкции изучаются как способы передачи непреднамеренной имплицитности в речи. В статье также рассмотрены сходства и различия между имплицитностью и эллипсисом.

Y. YERZINKYAN, N. MANUKYAN – *The Expression of Unintentional Implicitness in Elliptical Sentences.* – The aim of the present paper is the study of elliptical sentences in dialogue from the point of view of their unintentionality. These grammatical structures are observed as linguistic forms which convey unintentional implicitness to speech. Special attention is paid to the similarities and differences of the two linguistic phenomena under study – implicitness and ellipsis. Also, an attempt is made to point out the differences in expressing implicitness in both elliptical and non-elliptical sentences.